Տնտեսական հարցերի
մշտական հանձնաժողով

‹‹ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ›› ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ..... 3

I. «ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ..... 9

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆԱՃԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ..... 10

III. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԱՃԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ..... 15

1. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ ԿԱՐԱԳԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ..... 15

2. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՄՍԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ, ՁԿԱՆ, ՊԱՆԻՐՆԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ... 18

3. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԲԵՆԶԻՆԻ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՍԵՂՄԱԾ ԳԱԶԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ..... 21

IV. ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ..... 26

IV. «ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 29

«ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների նշանակալի աճ, ինչը բարենպաստ հիմքեր է ձևավորում երկրի առաջ կանգնած հրատապ նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար: Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2017 թվականին կազմել է 7.7%, իսկ տնտեսական աճը՝ 7.5%: Նման բարձր տնտեսական ակտիվությունը հիմնականում պայմանավորված է եղել արդյունաբերության (12.6%), ծառայությունների (14.4%) և առևտրի (14.0%) ոլորտներում արձանագրված աճով: Նման բարձր աճին նպաստել է նաև երկարաժամկետ կտրվածքով անկման փուլում գտնվող շինարարության ոլորտում արձանագրված աճը (2.2%), իսկ աճը որոշակիորեն զսպել է գյուղատնտեսության շուրջ 3%-ով անկումը: Արտահանման աճը 2017 թվականին կազմել է 25.2% , իսկ ներմուծմանը՝ 27.8%: Միջին անվանական աշխատավարձը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 194259 դրամ, ինչը 2016 թվականի համեմատ բարձր է եղել 2.9%-ով: 2017թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը (2017 թվականի դեկտեմբերը 2016 թվականի դեկտեմբերի համեմատ) կազմել է 2.6%[1]:

Դրական միտումներով հանդերձ, 2017 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել պարենային և սոցիալական նշանակության ոչ պարենային մի շարք ապրանքատեսակների գների նշանակալի բարձրացում՝ խախտելով 2017 թ. մայիս ամսից այս ապրանքների գնանկման կամ գների 0-ական աճի (միայն սեպտեմբեր ամսին) պատկերը[2]: Մասնավորապես, սննդամթերքի և ոչ ալկոհոլային ընպելիքների 12-ամսյա գնաճը 2017 թվականի դեկտեմբերին 2016 թվականի դեկտեմբերի համեմատ արդեն կազմել է 5.5%,

[1] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 6, http://armstat.am/file/article/cpi_12_2017.pdf:

[2] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 5, http://armstat.am/file/article/cpi_12_2017.pdf:

ալկոհոլային խմիչքներինը և ծխախոտինը՝ 4.0%[3]: Գնաճի միտումը պահպանվել է նաև 2018 թվականի հունվարին 2017 թվականի դեկտեմբերի համեմատ կազմելով 5.8%[4]:

Խնդրի սրությունը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների շուրջ 40%-ի[5] սպառողական ծախսերի կառուցվածքում 1 շնչին բաժին ընկնող միջին ամսական սպառողական ծախսերի գերակշիռ մասը՝ 53.4%-ից մինչև 60.2%-ը[6], նպատակաուղղվում է հենց սննդամթերքի ձեռք բերմանը (տես աղյուսակ 1-ում), ինչի գների փոփոխությունների նկատմամբ բնականաբար բնակչությունն առավել զգայուն է, իսկ դրա շուրջ 30%-ը որոշակիորեն նաև խոցելի[7]:

1. Հայաստան. Սպառողական ծախսերի կառուցվածքը 2016 թվականին՝ ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի (մեկ շնչի հաշվով միջին ամսական)[8]

Դեցիլային խմբեր ըստ սպառողական ծախսերի	Սպառողական ծախսեր	այդ թվում՝				
		սննդամթերք	ալկոհոլային խմիչք	ծխախոտ	ոչ պարենային ապրանքներ	Ծառայութ-յուններ
I	100	60.2	0.2	3.3	12.2	24.1
II	100	55.6	0.3	3.8	14.1	26.2
III	100	57.3	0.4	4.3	12.9	25.1
IV	100	53.4	0.4	4.0	15.7	26.5
V	100	49.2	0.4	4.0	17.5	28.9
VI	100	48.6	0.5	3.8	18.3	28.8
VII	100	45.0	0.5	3.7	20.3	30.5
VIII	100	38.6	0.4	3.4	24.7	32.9
IX	100	36.8	0.7	2.6	22.2	37.7
X	100	31.1	0.8	1.8	21.7	44.6

Հարկ է նշել, որ ազգային վիճակագրական ծառայության արձանագրմամբ սննդամթերքի առանձին տեսակների մասով արձանագրված 12-ամսյա գնաճը զգալիորեն բարձր կամ ցածր է եղել պարենային ապրանքների (միասին վերցրած) 12-ամսյա գնաճի միջին ցուցանիշից (տես աղյուսակ 3-ում):

---

[3] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 6, http://armstat.am/file/article/cpi_12_2017.pdf:

[4] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականի հունվար-ապրիլին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 6, http://armstat.am/file/article/cpi_04_2018.pdf:

[5] Ըստ սպառողական ծախսերի առանձնացվող 10 դեցիլային խմբերից առաջին 4-ի:

[6] Աղքատության ստորին գծում այն կազմում է շուրջ 60%, վերին գծում 53.4%:

[7] Պաշտոնական վիճակագրությամբ ՀՀ բնակչության 29.4%-ը համարվում է աղքատ:

[8] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2017թ., էջ 142-143, http://armstat.am/file/article/poverty_2017_a_3.pdf:

2. Հայաստան. Որոշ սպառողական ապրանքների գների փոփոխությունը 2017 թվականի դեկտեմբերին 2016 թվականի դեկտեմբերի համեմատ[9]

Գնաճ		Գնանկում	
Անվանում	Հավելաճ (+%)	Անվանում	Հավելաճ (-%)
Կարագ սերուցքային	41,0	Խառը կանաչի	-48,5
Խոզի բուդ՝ թարմ, պաղեցրած	38,3	Խնձոր	-30,8
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	36,9	Սխտոր	-22,2
Լոլիկ	31,1	Հնդկացորեն	-21,9
Միս գառան՝ թարմ, պաղեցրած	28,9	Կանաչ սոխ	-18,2
Կարտոֆիլ	28,0	Տաքդեղ (կանաչ, կարմիր)	-12,1
Իշխան՝ թարմ, պաղեցրած	23,4	Ոսպ	-11,9
Միս տավարի և հորթի՝ ոսկորով	17,1	Ադամաթուզ	-10,7
Ընկույզի միջուկ	16,1	Կաղամբ	-8,9
Միս տավարի և հորթի՝ անոսկր	12,4	Շաքարավազ	-6,0
Պանիր կովի կաթից	12,3	Ոլոռ	-5,1
Միս տավարի և հորթի՝ աղացած	12,0	Բուսական յուղ արևածաղկի	-5,0
Հավի ձու	10,1	Կակաո	-4,2
Պանիր տնական	9,1	Բրինձ	-4,0
Գինի կիսաքաղցր	8,0	Մակարոն	-2,9
Ծխագլանակներ ֆիլտրով՝ այլ երկրների արտադրութ.	7,0	Սմբուկ	-2,4
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրութ.	6,0	Վերմիշել	-1,2
Դիզելային վառելիք	18,9	Հավի միս՝ (ամբողջական հավ) սառեցրած	-1,1
Բենզին	18,2	Այլուր ցորենի բարձր տեսակի	-0,7
Վառելափայտ	6,6	Գազ ածխաջրածնային, սեղմված՝ կենցաղային	-1,6

Փաստացի 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ 2016 թվականի դեկտեմբերի համեմատ գների զգալի հավելաճ են արձանագրել սերուցքային կարագը (41%), խոզի (37-38%), գառան (28.9%) և տավարի (17.1%) միսը, կարտոֆիլը (28%), պանիրը (9-12%) և հավի ձուն (10.1%): Իսկ զգալի գնանկում արձանագրել են կանաչեղենը (48.5%), խնձորը (30.8%), սխտորը (22.2%), հնդկացորենը (21.9%), ոսպը (11.9%), ադամաթուզը (10.7%) և կաղամբը (8.9%): Սակայն, պետք է նշել, որ զգալի գնաճ արձանագրած ապրանքատեսակների տեսակարար կշիռը Հայաստանի բնակչության 1 շնչին բաժին ընկնող նվազագույն պարենային զամբյուղի տարեկան արժեքում ավելի նշանակալի է, քան գնանկում արձանագրած պարենամթերքինը (տես աղյուսակ 3-ում):

[9] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ.հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 7, http://www.armstat.am/am/?nid=157&id=578:

3. Հայաստան. Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2017 թ. IV եռամսյակի միջին ընթացիկ գներով (հաշվարկված ՀՀ ԱՎԾ կողմից)[10]

Պարենամթերքի անվանումը	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Ամսական նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Տեսակարար կշիռը պարենային զամբյուղի 1 շնչին բաժին ընկնող տարեկան նորմայի ընդամենն արժեքի մեջ
Մսամթերք (տավարի միս)	100050,2	8337,5	25,7%
Հաց	43102,7	3591,9	11,1%
Կենդանական յուղ	36271,5	3022,6	9,3%
Միրգ (խնձոր)	29075,9	2423,0	7,5%
Ձուկ	27849,8	2320,8	7,2%
Կաթ	26849	2237,4	6,9%
Կարտոֆիլ	19355,6	1613,0	5,0%
Պանիր	18570,4	1547,5	4,8%
Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ)	17728,1	1477,3	4,6%
Ձավարեղեն (բրինձ)	14299,6	1191,6	3,7%
Ձու	12136,3	1011,4	3,1%
Ընդեղեն (լոբեղեն)	11190,2	932,5	2,9%
Շաքար	9173,8	764,5	2,4%
Կաթնաշոռ	8698	724,8	2,2%
Բուսական շուղ	5059,6	421,6	1,3%
Մարգարին	4198,8	349,9	1,1%
Այլուր	2872,6	239,4	0,7%
Մակարոնեղեն	2789,1	232,4	0,7%
Ընդամենը՝ 1 շնչին բաժին ընկնող պարենային զամբյուղի արժեքը տարեկան կտրվածքով	**389271,2**	-	-
Ընդամենը՝ 1 շնչին բաժին ընկնող պարենային զամբյուղի արժեքը ամսական կտրվածքով	**32439,3**	-	-
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը տարեկան կտրվածքով	**689010,2**	-	-
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ամսական կտրվածքով	**577417,5**	-1	-

2017 թվականի դեկտեմբերի դրությամբ ՀՀ տնային տնտեսությունների 1-շնչին բաժին ընկնող նվազագույն պարենային զամբյուղի տարեկան արժեքում նշանակալի գնաճ արձանագրած պարենային ապրանքներից՝ մսի տեսակարար կշիռը կազմում է 25.7%, կենդանական յուղինը 9.3%, պանրինը 4.8%, կարտոֆիլինը 5.0%, ձվինը 3.1%: Իսկ զգալի գնանկում արձանագրած ապրանքներից նվազագույն պարենային զամբյուղի տարեկան

[10] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2018, էջ 267, http://armstat.am/file/article/sv_12_17a_6200.pdf:

արժեքում զգալի տեսակարար կշիռ ունեն միայն խնձորը 7.5% և բանջարեղենը՝ 4.6%: Որոնք թեև 2017 թվականի դեկտեմբերին 2016 թվականի դեկտեմբերի համեմատ զգալի գնանկում են արձանագրել, սակայն ԱՎԾ արձանագրմամբ 2017 թվականի նոյեմբերի նկատմամբ զգալիորեն թանկացել են (բանջարեղենի գնաճը կազմել է 25.1%, իսկ մրգինը 4.3%)[11]:

Հարկ է սակայն նշել, որ ՀՀ տնային տնտեսությունների իրական սպառման կառուցվածքը որոշակիորեն չի համապատասխանում նվազագույն սպառողական զամբյուղի առավել հիպոթետիկ ցուցանիշին[12]: Մասնավորապես, ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվում է նաև տնային տնտեսությունների (ներառյալ 1 շնչի հաշվով)՝ սննդամթերքի և ծխախոտի գնման ծախսերի կառուցվածքը[13], ինչպես նաև մանրածախ առևտրի ապրանքային կառուցվածքը[14], որնցում, ի տարբերություն նվազագույն սպառողական զամբյուղի արժեքում ունեցած տեսակարար կշռի տվյալ ապրանքներն ունեն փոքր-ինչ նվազ տեսակարար կշիռներ: Ամեն դեպքում, գնաճ արձանագրվել է տնային տնտեսությունների կողմից սննդամթերքի գնման ծախսերում նշանակալի կշիռ ունեցող ապրանքների մասով: Սրան զուգահեռ զգալի աճել են նաև տնային տնտեսությունների 1 շնչին բաժին ընկնող սպառողական ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող ծխախոտային արտադրանքի (6-7%) և բենզինի (18.2%) գները: Թերևս հենց այս հանգամանքով է պայմանավորված այն, որ տնային տնտեսությունների զգալի մասը 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին առավելապես զգացել են ոչ թե գնանկման ազդեցությունն, այլ գնաճի ճնշումներ, քանի որ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքներին հատկացվող ծախսերի աճը վերջնարդյունքում մեծացրել է տնային տնտեսությունների՝ պարենային ծախսերի համար անհրաժեշտ բյուջեն: Այս իրավիճակը շարունակվել է նաև 2018 թվականի հունվարին:

Հիմնականում վերոգրյալ խնդիրների կարևորմամբ էլ ՀՀ Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից 2018 թվականի հունվարի 23-ին կազմակերպվել էր խորհրդարանական լսումներ, որոնց ներգրավվել են ԱԺ

---

[11] Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2017թ.հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2018 թ., էջ 8, http://www.armstat.am/am/?nid=157&id=578:

[12] Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը հաշվարկվում է առողջապահության նախարարության մեթոդաբանությամբ՝ անհատի կենսական նվազագույնի համար անհրաժեշտ կալորիականությունն ապահովող պարենային ապրանքների սահմանված քանակությունը դրանց պայմանական միավորի (գրամ, կիլոգրամ, հատ, լիտր և այլն) ընթացիկ շուկայական գներով բազմապատկելու եղանակով:

[13] Տես ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգրքի «Կենսամակարդակ» բաժնում և ՀՀ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը հրապարակման «Հայաստան. տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը» բաժնում:

[14] Տես Տես ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգրքի «Առևտուր և ծառայություններ» բաժնում:

պատգամավորներ, ՀՀ կառավարությունը, գիտական-փորձագիտական հանրության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Լսումների նպատակն է հանդիսացել սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքների թանկացման պատճառների վերհանումը, գնաճի հնարավոր հետևանքների գնահատումը և լուծման ուղիների առաջադրումը:

I. «ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Խորհրդարանական լսումներում հնչած ելույթների, խնդրի առնչությամբ կատարված առաջարկությունների, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին տրամադրված նյութերի ամփոփման նպատակով Հանձնաժողովի փորձագետները և Հանձնաժողովի պաշտոնական գիտական խորհրդատու հանդիսացող ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը համատեղ իրականացրել են հավելյալ հետազոտություններ, որոնց առանցքում դրվել է ընդհանրապես Հայաստանի Հանրապետությունում գների տատանումների վրա ազդող հիմնական գործոնների բացահայտումը, դրանց ազդեցության չափի և արագության գնահատումը, բացառապես շուկայական տնտեսությանը ներհատուկ գործիքների կիրառմամբ գների զսպման հնարավոր ուղիների որոնումը: Մյուս կողմից, խումբը կենտրոնացել է նաև 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և 2018-ի հունվարին սոցիալական նշանակության կոնկրետ ապրանքատեսակների գների աճի պատճառների բացահայտման և դրա հաղթահարման ուղիների որոնման վրա:

Ըստ այդմ, սույն զեկույցը բաղկացած է երեք բաժիններից, որոնցում ներկայացված են.

1. Հայաստանի Հանրապետության տնտեսությունում գնաճը պայմանավորող հիմնական գործոնները:
2. 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և 2018 թվականի հունվարին սոցիալական նշանակության մի շարք ապրանքների գների աճի պատճառները:
3. Գնաճի զսպման առնչությամբ Հանձնաժողովի կողմից առաջարկվող միջոցառումները:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՆԱՃԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը փոքր, բաց տնտեսություն է, որի վրա արտաքին ազդակների ճնշումները նշանակալի են: Առաջին անհրաժեշտության ապրանքներից շատերի առումով ներքին շուկայում ներմուծողներն ունեն զգալի՝ հաճախ ներքին արտադրողներին գերակշռող մասնաբաժիններ: Սրա հիմնական պատճառը ներքին արտադրողների ցածր արտադրողականությունը, սահմանափակ արտադրական հզորությունները և դրանց կուտակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղությունն են:

Թեև ՀՀ կառավարությունը հայրենական արտադրողների տեխնոլոգիական վերազինմանը նպաստելու նկատառմամբ նշանակալի հարկային արտոնություններ է սահմանանել, սակայն ներքին շուկայի և հայրենական արտադրողների փոքր չափերը և գործարար մշակույթում արմատավորված որոշակի երևույթները և ընկալումները[15] դեռևս բացասական ազդեցություն ունեն Հայաստանի մշակող արդյունաբերության և հատկապես սննդամթերքի արտադրության ճյուղի ընկերությունների տեխնոլոգիական հագեցման մոտիվացիայի և ընթացքի վրա: Մասնավորապես, ՏՄՊՊՀ 2009-2017 թվականների գործունեության հաշվետվությունների դիտարկումը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից այդ ժամանակահատվածում ուսումնասիրած ապրանքային շուկաներում մեծ է եղել այն ապրանքային շուկաների թիվը (բոլոր դիտարկված շուկաների շուրջ 50%-ը), որոնք Հանձնաժողովի կողմից բնորոշվել են իբրև կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող և որոնցում գործել են 1-3 գերիշխող դիրք ունեցող ընկերություններ: Ճիշտ է, ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետների՝ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցությունը շուկայի վրա հետևողականորեն նվազել է, իսկ տեղական

[15] Օրինակ՝ գործարար միջավայրում մշտապես առկա բացասական սպասումները (ինչպես օբյեկտիվ այնպես էլ սուբյեկտիվ ընկալումների տիրույթում), ՏՄՊՊՀ տարեկան դիտարկումներով բացահայտվող անբարեխիղճ մրցակցության դրսևորումների նշանակալի ծավալը (գերիշխող դիրքի չարաշահում, մրցակիցների շուկայական մուտքի անօրինական սահմանափակումներ), թանկարժեք և բարձր արտադրողականությամբ օժտված արտադրական տեխնոլոգիաների փոխարեն սեփական բիզնեսից առաջնահերթ շքեղ կենցաղավարությունը ֆինանսավորելու և այդ ծախսերը սպառողների հաշվին փոխհատուցելու նպատակով բարձր գների սահմանան տիրապետող մշակույթը և այլ բացասական արժեքային ընկալումները: Դրան զուգահեռ, Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետների կողմից հրապարակվող «Գլոբալ մրցունակության զեկույցներում» այնպիսի առանցքային գործոնների մասով ինչպիսիք են՝ մենեջմենթի դպրոցների ցածր որակը, մարքեթինգի կիրառման ցածր աստիճանը, արտադրական ցիկլերի բարդությունը, արժեքային շղթայի լայնությունը ՀՀ արձանագրած միջակ կամ հետնապահ դիրքերը:

մրցակցության աստիճանը հետևողականորեն սրվել, ինչի արդյունքում ՀՀ-ն 2015-2017 թվականներին կտրուկ բարելավել է իր դիրքերը, սակայն նշյալ փոփոխությունները տեղի են ունեցել նաև ՀՏՀ «Գլոբալ մրցունակության զեկույցի» մշակման համար տեղեկատվության ստացման մեթոդաբանության փոփոխման արդյունքում և գործնականում դեռևս հնարավոր չէ գնահատել, թե այս փոփոխությունը որքանո՞վ է փաստում մրցակցային միջավայրում տեղի ունեցող միտումների իրական կամ զուտ արձանագրային լինելը: Սրան զուգահեռ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի դիտարկումները փաստում են, որ հատկապես պարենային ապրանքների բազմաթիվ շուկաներում նշանակալի մասնաբաժին ունեցող մատակարարները տիրապետում են նաև սեփական առևտրային ցանցերի, ինչն անշուշտ անհավասար մեկնարկային (մրցակցության տեսանկյունից) պայմաններ է ստեղծում դրանց և տվյալ ապրանքային շուկաների մյուս մասնակիցների միջև[16]: Խնդիրը կայանում է նրանում, որ ցանցերին տիրապետող մատակարարները ստանում են ապրանքային շուկայի գների ու շահութաբերության մակարդակի վրա ներազդելու լայն հնարավորություններ, ինչը փաստարկված է նաև ՏՄՊՊՀ դիտարկումներով[17]:

Հիմնականում սրանով պայմանավորված բազմաթիվ ապրանքային շուկաներում ապրանքային հաշվեկշռում մեծ տեսակարար կշիռ ունի ներմուծումը, ինչի ազդեցությամբ ՀՀ ապրանքային շուկաներում ներմուծվող ապրանքների և ներմուծման ուղեկցման ծառայությունների միջազգային գների, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի տատանումները զգալի ազդեցություն ունեն: Թեպետ զգալի ազդեցություն ունեն նաև ներքին բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են՝ բանկային տոկոսադրույքները, հարկային վարչարարության ազդեցությամբ ստվերի կրճատումը[18], բնակչության տնօրինվող եկամտի փոփոխությունները, տնտեսական ակտիվության ցուցանիշի փոփոխությունները և այլն:

---

[16] Մանրամասն տես https://asue.am/amberd/research/characteristic-food-non-food-commodity-markets :

[17] Մասնավորապես, ՏՄՊՊՀ կողմից 2017 թվականին ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին տրամադրված «Մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ» տեղեկանքում փաստվում է, որ «որոշ դեպքերում ներմուծող ընկերությունների կողմից առևտրի օբյեկտներին (խանութներին) մեծածախ իրացման գների և ներմուծող ընկերություններին պատկանող առևտրային ցանցերի կողմից սպառողներին իրացվող ապրանքների մանրածախ գների (մեծածախ և մանրածախ գների մարժա) տարբերությունը բավականին փոքր է (մոտ 5-10 տոկոս)…»: Տեղեկանքի էջ 6-ում:

[18] Մասնավորապես, աղբյուրի, հանքային ջրերի, զովացուցիչ ըմպելիքների, պահածոյացված մրգերի և բանջարեղենի, բնական հյութերի և կաթնամթերքի արտադրության ծավալները դրոշմապիտակների ներդրմանը հաջորդող տարում արձանագրել են թողարկման ծավալների շեշտակի աճ (15-35%)՝ առանց իրացման շուկաների ընդլայնման (ներքին պահանջարկի աճի կամ արտահանման աճի), ինչը հանգեցրել է նաև այդ ապրանքատեսակների նշանակալի գնաճի:

Սրանցից յուրաքանչյուրի ազդեցությունն ընկալելու նպատակով, էկոնոմետրիկ գործիքակազմի կիրառմամբ, փորձ է կատարվել բացահայտել ընդհանրապես ՀՀ-ում և ՀՀ առանձին ապրանքային շուկաներում գնաճի հիմնական դետերմինանտները և գնահատել դրանց նշանակալիությունն ու հարաբերական կարևորությունը: Այդ նպատակով մեր կողմից ձևավորված տարբեր մոդելներում նախապես ընտրվել են հետևյալ փոփոխականները.

- սպառողական գների ինդեքսը,
- տնտեսական ակտիվության ցուցանիշը,
- դրամի փոխարժեքը,
- փողի ագրեգատները,
- շրջանառությունում կանխիկ փողի ծավալը,
- ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը,
- միջին անվանական աշխատավարձը,
- միջազգային ապրանքային շուկաներում միջին գները ցույց տվող Bloomberg Commodities Index-ը[19]:

Վերլուծությունն իրականացվել է 2010 թ. հունվարից 2017 թ. դեկտեմբերն ընդգրկող ժամանակային շարքերով[20]:

Իրականացված վերլուծության արդյունքները փաստում են, որ ընդհանուր առմամբ ՀՀ տնտեսությունում գնաճը (նաև գնանկումը) հիմնականում պայմանավորված է տնտեսական ակտիվության ցուցանիշի, միջազգային ապրանքային շուկաներում ապրանքների գների, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունների, ինչպես նաև գնաճի իներցիայի (ապրանքների գների սեփական նախորդ լագերի) հետ: Ընդ որում սրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը դրսևորվում է տարբեր ժամանակային լագերով (5-12 ամիս ուշացումներով):

---

[19] **Bloomberg Commodities Index**-ը հաշվարկվում է թվով 22 զգայուն ապրանքատեսակների միջազգային բորսայական գների հիման վրա: Տվյալ 22 ապրանքատեսակներն են էներգակիրներից բնական գազը, Brent տեսակի նավթը, WTI տեսակի նավթը, բենզինը, դիզելային վառելիքը, հացահատիկային մշակաբույսերից՝ եգիպտացորենը, սոյայի հատիկները, ցորենը, սոյայի ալյուրը, սոյայի յուղը, ամերիկյան HRW տեսակի ցորենը, հանքահումքային ռեսուրսներից՝ ալյումինը, պղինձը, ցինկը, նիկելը, թանկարժեք մետաղներից՝ ոսկին արծաթը, հավելյալ ապրանքներից՝ շաքարը, սուրճը, բամբակը, մսատու կենդանիներից՝ կենդանի վիճակով խոշոր եղջրավոր անասունները և կենդանի վիճակով խոզը:

[20] Վերլուծությունն իրականացվել է նախ ARMA (ավտոռեգրեսիոն սահող միջինների), ապա՝ VAR (վեկտորական ավտոռեգրեսիոն) մեթոդներով: Վերլուծության նպատակն է հանդիսացել էկոնոմետրիկ գործիքակազմի կիրառմամբ բացահայտել գնաճի հիմնական դետերմինանտները ՀՀ-ում և գնահատել դրանց նշանակալիությունն ու հարաբերական կարևորությունը:

Հիմնականում ներքին արտադրողների սահմանափակ արտադրական հզորությունների պատճառով Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը մշտապես հանգեցնում է պահանջարկի գնաճի. տնտեսությունում առաջարկը «չի հասցնում հարմարվել» պահանջարկի փոփոխությանը: Ընդ որում, սա գնաճի վրա առավել արագ ազդող գործոններից է: Հայաստանում ամբողջական պահանջարկի աճը կամ նվազումը գնաճն արագացնում կամ թուլացնում են մոտ 5 ամիս հետո: Այսինքն կարելի է վստահաբար պնդել, որ 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արձանագրված գնաճը որոշակիորեն պայմանավորված է նաև 2017 թվականի մայիս ամսից ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի նշանակալի աճով[21]:

Միջազգային ապրանքային շուկաներում ձևավորված գների ազդեցության պարագայում գործ ունենք առաջարկի գնաճի հետ: Մեր վերլուծությունները փաստում են, որ միջազգային բորսաներում թվով 22 ապրանքների՝ ըստ շուկայում շրջանառության ծավալների միջին կշռված գների փոփոխությունը (աճ կամ նվազում) Հայաստանում նույնպես ազդում են գների վրա, ինչը սովորաբար սկսում է դրսևորվել միջինում 8 ամիս հետո: Հատկանշական է, որ այստեղ խոսք չի գնում տվյալ 22 ապրանատեսակների գների տատանումների՝ ՀՀ ներքին շուկայում նույն ապրանքների գների ձևավորման վրա ունեցած ազդեցության մասին: Խոսքը գնում է տվյալ 22 ապրանքատեսկների՝ ՀՀ տնտեսությունում գնաճի վրա ունեցած ազդեցության մասին ընդհանրապես: Տվյալ դեպքում ի նկատի է առնվում այդ ապրանքատեսակների միջին բորսայական գների փոփոխության երկրորդային ազդեցությունները[22],

Սույն զեկույցի հաջորդ բաժնում դեռևս կքննարկվեն մեր վերլուծությունների արդյունքները, որոնք փաստում են, որ որոշ ապրանքատեսակների (օրինակ՝ բենզին, շաքար, կարագ) միջազգային բորսայական գների կամ ներմուծողների ձեռքբերման գների աճը տվյալ ապրանքատեսակների Հայաստանյան շուկայում իր արձագանքն է ստանում հաճախ շատ արագ՝ նույնիսկ օրեր հետո: Իսկ դրա նվազման ազդեցությունը դրսևորվում է ավելի երկարաժամկետում. երբեմն կարող է նաև ընդհանրապես չդրսևորվել:

[21] Ընդ որում յուրաքանչյուր ամսվա արձանագրված աճը նշանակալի է եղել ինչպես նախորդ տարվա նկատմամբ, այնպես էլ նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ:

[22] Օրինակ՝ էներգակիրների գների աճը հանգեցնում է տրանսպորտի ծառայությունների և մասնավորապես բեռնափոխադրումների սակագների բարձրացմանը, որն իր հերթին գնագոյացնող է մատակարարների համար և բնականաբար ազդում է դրանց կողմից վաճառվող ապրանքների գների վրա:

Հայաստանի տնտեսությունում գնաճի վրա էական ազդեցություն ունի նաև տարբեր ապրանքների գնաճի սեփական նախորդ լագը (վերջիններիս իներցիան), ինչը բացատրվում է գնաճի շղթայական բնույթով և հասարակության գնաճային սպասումներով և դրսևորվում է տարբեր ապրանքների և ծառայությունների գների փոփոխության երկրորդային ազդեցությունների պատճառով: Ընդ որում, գնաճի տատանողականությունը Հայաստանում ամենաշատը բացատրվում է հենց սեփական իներցիայով, իսկ մյուս գործոնները միտում ունեն այն բացատրելու առավել երկար ժամանակահատվածում: Մասնավորապես, մեր կողմից դիտարկված ժամանակահատվածների նախնական փուլերում՝ մինչև 6 ամիս ընկած հատվածում, գների տատանումները հիմնականում բացատրվել են «հենց իրենք իրենցով» (իրենց նախորդ մեծություններով), իսկ մյուս գործոնների բացատրողականությունը բավականին փոքր է եղել: Մյուս գործոնների ազդեցությունը առավել ամբողջապես դրսևորվել է դիտարկված ժամանակահատվածից 1 տարի հետո՝ աստիճանաբար մեծանալով և ապա կայունանալով, որին զուգահեռ գնաճի իներցիայի կարևորությունը թուլացել է:

Հայաստանում գնաճի վրա նշանակալի ազդեցություն ունի նաև Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունները, որոնց ազդեցությունը սովորաբար դրսևորվում է 6 ամիս ուշացումով[23]:

Ուշագրավ է, որ փոխարժեքի տատանումները, փողի ագրեգատները և միջին աշխատավարձը նշանակալի ազդեցություն չունեն ՀՀ տնտեսությունում արձանագրվող գնաճի միտումների վրա: Թեպետ փոխարժեքը առանձին ապրանքատեսակների շուկաներում[24] ձևավորված մանրածախ գների տատանման մեկնաբանման նպատակով փաստացի նշանակալի ազդեցություն է ունեցել:

[23] Սա կապված է թերևս դրամավարկային քաղաքականության երկար արտաքին լագերի հետ, քանի որ դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը պահանջում է, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունը նախ ազդի շուկայական կարճաժամկետ, ապա՝ երկարարաժամկետ տոկոսադրույքների վրա, որոնք իրենց հերթին պետք է ազդեն վարկավորման ծավալների, որն էլ իր հերթին՝ տնտեսությունում ամբողջական պահանջարկի և հետևաբար՝ գնաճի վրա:

[24] Հատկապես նրանց, որոնց ներմուծման տեսակարար կշիռը շուկայի հաշվեկշռում գերազանցում է ներքին արտադրությանը:

III. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԱՃԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ

1. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ ԿԱՐԱԳԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սերուցքային կարագը ներքին շուկայում հանդիսանում է հիմնականում ներմուծվող ապրանք: 2017 թվականի հունվար դեկտեմբերին ՀՀ-ում արտադրվել է 343 տոննա կարագ և բուսական յուղ (շուրջ 40%-ով պակաս քան 2016 թվականին) և ներմուծվել է՝ 4217 տոննա (շուրջ 11%-ով պակաս քան 2016 թվականին): 2017 թվականի թանկացմանը նախորդած 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կարագի գների տատանումների 84%-ը պայմանավորված է եղել կարագի համաշխարհային գների, արտարժույթի փոխարժեքի և շուկայում գերիշխող դիրքի առկայություն գնահատականի փոփոխություններով[25], իսկ 2017 թվականի թանկացումները հիմնականում պայմանավորվել են կարագի միջազգային գների աճով:



Կարագի ներմուծման շուրջ 65%-ը բաժին է ընկնում Նոր Զելանդիային, 30%-ը Եվրոպական երկրներին (ներառյալ՝ Ուկրաինան) և շուրջ 4.4%-ը ԵԱՏՄ երկրներին: Չնայած այն փաստին, որ ՌԴ-ում և Բելոռուսում սերուցքային կարագի մանրածախ և մեծածախ գներն անհամեմատ ցածր են

[25] Կարագի և բենզինի ապրանքային շուկաներում 2007-2016թթ ձևավորված գների մեկնաբանման նպատակով ընտրվել են հետևյալ փոփոխականները. դիտարկվող ապրանքատեսակի միջազգային բորսայական գների տատանումները, դիտարկվող ապրանքատեսակի ներքին արտադրության, արտահանման, ներմուծման ծավալների փոփոխությունները, դրամի փոխարժեքը, դիտարկվող ապրանքային շուկաներում մրցակցության սրության աստիճանի փոփոխությունները, դիտարկվող ապրանքային շուկաներում գերիշխող դիրքի առկայության հանգամանքը և դրա փոփոխությունները, հարկային կամ մաքսային դրույքաչափերի փոփոխությունները[25]: Վերլուծությունն իրականացվել է 2007 - 2016 թթ. ժամանակային շարքերով: Ինչ վերաբերում է մոդելների որակի վիճակագրական պարամետրերին, բոլոր մոդելներում ներառված բոլոր գործոնները նշանակալի են 5% մակարդակում: Առաջին մոդելի դետերմինացիայի գործակիցը բավականին բարձր է՝ մոտ է 0.9-ին: Առանձին ապրանքատեսակների շուկաների համար մշակված մոդելների պարագայում ցուցանիշը տատանվել է 0.95-0.99 միջակայքում: Սա նշանակակում է, որ գների տատանումների գրեթե 90 տոկոսը դիտարկված առանձին ապրանքային շուկաներում բացատրվում է մեր կողմից առանձնացված գործոններով:

Հայաստանից, ակնկալել այս երկրներից ներմուծման զգալի աճ հնարավոր չէ: Ռուսաստանը ևս հանդիսանում է սերուցքային կարագի խոշոր ներկրող: Փաստացի ՌԴ ներքին շուկայում սպառվող սերուցքային կարագի 30%-ը կազմում է ներմուծված կարագը: Մասնավորապես, 2016 թվականին ՌԴ-ում արտադրվել է 253 հզ. տոննա սերուցքային կարագ և կենդանական յուղեր, իսկ ներմուծվել՝ հավելյալ 105հզ. տոննա: 2016 թվականին ՌԴ-ից արտահանվել է ընդամենը 3.8 հզ տոննա սերուցքային կարագ: Բելոռուսը հանդիսանում է սերուցքային կարագի խոշոր արտադրող և արտահանման ծավալներով աշխարհի 5 խոշորագույն արտահանողներից մեկը: Սակայն բելոռուսական արտադրողները 2014 և 2015 թվականներին Ռուսաստանի կողմից մի շարք երկրների վրա կիրառված ապրանքային էմբարգոյի արդյունքում (որում ներառված է նաև սերուցքային կարագը) վերակողմնորոշվել են դեպի ՌԴ արտահանումը, ինչը պայմանավորված է էմբարգոյի արդյունքում առաջացած նոր հնարավորություններից օգտվելու բնական մղումով[26]: 2017 թվականին Բելոռուսից արտահանվել է 76.5 հզ տոննա սերուցքային կարագ, որից 73.9 հզ տոննան (96,6%ը) բաժին է ընկել Ռուսաստանին: Համեմատության համար 2014 թվականին Բելոռուսի արտահանումը շուրջ 25 հզ տոննա պակաս է եղել[27]: Հայաստան արտահանվել է շուրջ 152 տոննա[28]:

Ակնհայտ է, որ Հայաստանում սերուցքային կարագի գնի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն և երկարաժամկետում կշարունակեն ունենալ ոչ թե ԵԱՏՄ արտադրողների գները, այլ հիմնականում՝ նոր զելանդական և եվրոպական արտադրողների (Frontera, Lactalis, Valio) գները:

---

[26] Ըստ ՌԴ կառավարությանն առնթեր վերլուծական կենտրոնի հրապարակման էմբարգոյի սահմանման արդյունքում արդեն 2015 թվականին Բելոռուսից կարագի արտահանումը ՌԴ աճել է շուրջ 14 հզ. տոննայով, իսկ Բելոռուսի տեսակարար կշիռը ՌԴ ներմուծված կարագի ծավալում 59%-ից աճել է մինչև 77.6%: Մանրամասն՝ http://ac.gov.ru/files/publication/a/8972.pdf:

[27] Բելոռուսի արտահանումը 2014-2015 թվականներին ըստ ԱՏԳԱԱ 6-նիշ դասակարգման http://www.belstat.gov.by/upload-belstat/upload-belstat-pdf/oficial_statistika/6znak-2015-god-29-07-2016/TT100E01.pdf
Բելոռուսի արտահանումը 2016-2017 թվականներին ըստ ԱՏԳԱԱ 6-նիշ դասակարգման http://www.belstat.gov.by/upload-belstat/upload-belstat-pdf/oficial_statistika/6znak-2016-2017_god/tt100e01.pdf

[28] 2016 թվականին ՀՀ ներմուծված 4217 կարագից շուրջ 102 տոննան (2.4%-ը) ներմուծվել է Բելոռուսից:



*** Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, դրամավարկային քաղաքականության ծրագիր. 4-րդ եռամսյակ, 2017, դրամավարկային քաղաքականության 2017թ. 3-րդ եռամսյակի ծրագիր կատարման հաշվետվություն**

Սերուցքային կարագի միջազգային շուկայում գների բարձրացումը սկսել է 2016 թվականի մայիսից, ինչին նպաստել են մի կողմից կաթի և կարագի համաշխարհային արտադրության ծավալների կրճատումը, իսկ մյուս կողմից՝ սերուցքային կարագի նկատմամբ գլոբալ պահանջարկի հետևողական աճը: ԵՄ տարածաշրջանում արտադրության ծավալների անկումը պայմանավորված է եղել ԵՄ կարագի շուկայի ազատականացման և ԵՄ արտադրողներին տրամադրվող սուբսիդիաների կրճատման, իսկ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում՝ երաշտի հետ: Արտադրության ծավալների անկման իրավիճակի երկարումը գլոբալ պահանջարկի ավելացման ֆոնին հանգեցրել է սերուցքային կարագի գների զգալի բարձրացմանը բոլոր ապրանքային բորսաներում[29]: Իսկ գնաճի միտումները սերուցքային կարագի սպառման բոլոր տարածաշրջաններում պահպանվել են ընդհուպ մինչև 2017 թվականի սեպտեմբեր ամիսը[30], որից հետո արտադրության ծավալների վերականգնմանը զուգահեռ սկսել են նվազել:

ՀՀ կարագի շուկայում 2016-2017 թթ. ընթացքում արձանագրված գնաճը կապված է եղել նույն իրողություններով: Ընդ որում, բորսայական գների, ինչպես նաև շուկայի հիմնական մատակարարների ձեռքբերման գների աճը (սկսած 2016 թվականի մայիսից) ՀՀ կարագի շուկայում սկսել է դրսևորվել շուրջ 4 ամիս ուշացումով (սկսած 2016 թվականի սեպտեմբերից): Փաստացի, 2016 թ. սեպտեմբերից 2017 թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում սերուցքային կարագի ձեռք բերման գինը բարձրացել է շուրջ 1773

[29] Տարեսկզբի 1 տոննայի դիմաց 4400 դոլարից՝ սեպտեմբերին հասցնելով մինչև 6000 ԱՄՆ դոլարի:

[30] Օրինակ ԵՄ շուկայում սերուցքային կարագի մեծածախ գնի պատմական մաքսիմումը գրանցվել է հենց 2017 թվականի սեպտեմբերին՝ կազմելով շուրջ 8.075 դոլար:

դրամով կամ 89%-ով, իսկ մանրածախ գինը բարձրացել է 1695 դրամով կամ շուրջ 82%-ով[31]: Ընդ որում, ՀՀ կարագ ներկրողների ձեռքբերման գների աճը համընկնում է ԵՄ-ում նոր զելանդական սերուցքային կարագի մեծածախ գնի աճի հետ[32]: ՀՀ-ում 1 կգ նոր զելանդական կարագի մանրածախ վաճառքի գները 2016 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կազմել են 2779 դրամ, իսկ 2017 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների՝ 3842 դրամ, այսինքն՝ գնային բարձրացումը կազմել է շուրջ 38 տոկոս:[33] 2017 թվականի սեպտեմբերից, կաթի արտադրության ծավալների վերականգնմանը զուգահեռ, սերուցքային կարագի համաշխարհային գները սկսել են հետևողականորեն նվազել: 2017 թվականի հոկտեմբերին Frontera ընկերության բացթողնման գինը օգոստոսին սահմանված գնից ցածր է եղել շուրջ 732 դրամով (կամ 22%-ով), իսկ նոյեմբերին՝ 1134 դրամով (կամ 34%-ով): Սակայն ՀՀ կարագի շուկայում այս նվազման ազդեցությունը, արդեն մատնանշված պատճառներով (գնաճի իներցիայի ազդեցությունը), որևէ ազդեցություն չի ունեցել: Մեր կանխատեսմամբ, կարագի շուկայում մանրածախ գները 2017 թվականի մայիսին գործող գներին մոտ միջակայքի կհասնեն 4-6 ամիս հետո միայն՝ հաշվի առնելով գնաճի իներցիայի հանգամանքը:

2. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՄՍԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ, ՁԿԱՆ, ՊԱՆԻՐՆԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը մսի, մսամթերքի, ձկան, պանրի, պտուղ բանջարեղենի և հավի ձվի առումով հիմնականում ինքնաբավ երկիր է[34]: Այս ապրանքատեսակների, ինչպես արտադրության, այնպես էլ մանրածախ վաճառքի մեջ ներգրավված են բազմաթիվ արտադրողներ և գյուղացիական տնտեսություններ:

---

[31] ՏՄՊՊՀ 2017թ. տարեկան գործունեության հաշվետվություն, էջ 19:

[32] ԵՄ-ում 2016 թ օգոստոսի համեմատ 2017 թ օգոստոսին մեծածախ գների հավելաճը կազմել է շուրջ 84% http://www.delfi.lv/biznes/bnews/ceny-na-slivochnoe-maslo-v-es-vyrosli-na-84-drugie-molochnye-produkty-tozhe-dorozhayut.d?id=49323257

[33] Տեղեկանք «Երևան Սիթի» առևտրի ցանցում մի շարք ապրանքատեսակների իրացման գների դիտանցման վերաբերյալ՝ http://competition.am/index.php?page=&menu=173&newsID=1471&lng=1

[34]Ինքնաբավության աստիճանը բոլոր ապրանքատեսակների համար էլ գտնվում է 92-100% միջակայքում: Միակ բացառությունը խոզի միսն է, որի ինքնաբավության աստիճանը ՀՀ-ում շուրջ 64%-է կազմել: Տես՝ ԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2017 թ., հունվար-դեկտեմբեր, էջ 68-75:

Նշված ապրանքատեսակների գնաճի հիմնական պատճառը կապված է կամ ներքին շուկայում հավասարակշռության խախտման կամ միջազգային գների աճին ներքին արտադրողների արձագանքման հետ:

	2015	2016	2017	2016	2017
Արտահանում	**1000 դոլ**	**1000 դոլ**	**1000 դոլ**	**2016-ը 2015-ի հաեմ.**	**2017-ը 2016-ի համեմ.**
Խոշոր եղջր, անասուններ (կենդանի)	**1141.5**	**558.3**	**5309.1**	**-50%**	**851%**
Ոչխարներ, այծեր (կենդանի)	3438	639,7	1554	-81%	143%
Ոչխարի կամ այծի թարմ միս, պաղեցրած կամ սառեցրած,	2976,5	9918	15972,1	233%	61%
Ձուկ (թարմ)	9918,1	8409,9	16801,9	-15%	100%
Ձուկ (սառեցրած)	240,9	430,3	699,4	79%	63%
Պանիր, կաթնաշոռ	23591	13053,4	12493,3	-45%	-4%
Կարտոֆիլ	778,3	140,5	74,3	-82%	-47%
Տոմատ	1547	22898,4	13444,1	1380%	-41%
Ներմուծում	**1000 դոլ**	**1000 դոլ**	**1000 դոլ**	**2016-ը 2015-ի հաեմ.**	**2017-ը 2016-ի համեմ.**
Խոշոր եղջր, անասուններ (կենդանի)	798,7	1089,6	1094,5	36,40%	0,50%
Տավարի միս (սառեցրած)	7 446,30	8191,1	8110,5	10,00%	-1,00%
Խոզի միս	14 466,80	10431,8	16045,4	-27,90%	53,80%
Մսամթերք (տավարի, խոզի, ոչխարի)	1 636,30	1946,2	4313,3	18,90%	121,60%
Ընտանի թռչնի միս եւ մսամթերք	33 722,10	24229,2	41301,1	-28,20%	70,50%
Համախառն բերք	**1000 տոն.**	**1000 տոն.**	**1000 տոն.**	**2016-ը 2015-ի հաեմ.**	**2017-ը 2016-ի համեմ.**
Կարտոֆիլ	607,7	606,3	547,4	-0,2%	-9,7%
Բանջարեղեն	1007,6	968,6	861	-3,9%	-11,1%
Պտուղ և հատապտուղ	377,1	242,6	361,6	-35,7%	49,1%
Ձու	659,8	694,6	683	5,3%	-1,7%
Կենդանիների գլխաքանակ				**2016-ը 2015-ի հաեմ.**	**2017-ը 2016-ի համեմ.**
Խոշոր եղջր, անասունների գլխաքանակ	688500	701535	655771	1,9%	-6,5%
Խոզերի գլխաքանակ	142432	174776	175549	22,7%	0,4%
Ոչխարի և այծի գլխաքանակ	745770	778069	727082	4,3%	-6,6%
Թռչնի գլխաքանակ	4145494	3942809	3814205	-4,9%	-3,3%
Թողարկում	**տոննա**	**տոննա**	**տոննա**	**2016-ը 2015-ի հաեմ.**	**2017-ը 2016-ի համեմ.**
Միս	78532,1	82918	85587,8	5,6%	3,2%
Կաթ	447,9	460,2	461,8	2,7%	0,3%
Պանիր	18592,5	22315,9	19140,7	20,0%	-14,2%

Աղյուսակում բերված վիճակագրական տվյալներից երևում է, որ «Մսամթերք» ապրանքախմբի բարձր աճը պայմանավորվել է 2017 թվականին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների արտահանման ծավալների, ինչպես նաև միջազգային շուկաներում խոզի մսի գների կտրուկ աճով:

Մասնավորապես.

- 2017 թվականին խոշոր եղջրավոր անասունների արտահանումը 2016 թվականի համեմատ աճել է 851%-ով, ոչխարի և այծի արտահանումը 143%-ով, ոչխարի և այծի մսինը՝ 61%-ով:
- Նույն ժամանակահատվածում ներմուծման ծավալները չեն ավելացել, իսկ մսի արտադրության ծավալներն աճել են ընդամենը 3.2%-ով:

- Բացի այս 2017 թվականին ներմուծվող մսի և մսամթերքի գները զգալի աճել են: Մասնավորապես, 2017 թվականին ներմուծվող տավարի մսի գինն ավելացել է 9%-ով, խոզի մսինը՝ 22%-ով, տավարի, խոզի և ոչխարի մսամթերքինը՝ 28%-ով:
- 2017 թվականին թարմ ձկան արտահանման ծավալներն ավելացել են շուրջ 100%-ով, սառեցվածինը՝ 63%-ով:
- 2017 թվականին պանրի արտահանման ծավալները նվազել են 4%-ով, սակայն արտադրությունը կրճատվել է 14.2%-ով:
- 2017 թվականին կարտոֆիլի համախառն բերքը կրճատվել է 9.7%-ով, իսկ բանջարեղենինը՝ 11.1%-ով:

Ուսումնասիրված պարենային ապրանքների շուկաներում գների բարձրացմանը որոշակիորեն նպաստել է նաև ներգնա զբոսաշրջության ծավալների մեծացումը: Մասնավորապես, 2017 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1.494.799, ինչը 18.7 %-ով ավելի է, քանի 2016 թվականի ցուցանիշը: Ներգնա զբոսաշրջության աճը նպաստել է տնտեսությունում հավելյալ շուրջ 235 հազար մարդու չափով պահանջարկի ստեղծմանը: Հատկանշական է, որ զբոսաշրջիկները ծառայություններից բացի հիմնականում սպառում են առաջին անհրաժեշտության ապրանքներ (մասնավորապես՝ սնունդ), ինչպես նաև սնվելու նպատակով օգտվում են հյուրանոցային, ռեստորանային և սրճարանային ծառայություններից, որոնք որպես հումք օգտագործում են հիմնականում պարենային զամբյուղում ներառված և մեր կողմից դիտարկված ապրանքները:

Ընդհանուր առմամբ պետք է արձանագրել, որ դիտարկված շուկաներում արձանագրված գնաճը կապված է բացառապես ներքին խնդիրների հետ, որոնք հիմնականում կապ ունեն ներքին արտադրության փոքր ծավալների և սահմանափակ արտադրական հզորությունների հետ: Այս պարագայում արտադրության, արտահանման կամ ներմուծման ծավալների փոփոխությունները էական ճնշումներ են առաջացնում շուկայում ձևավորված գների վրա՝ նպաստելով դրանց բարձրացմանը: Ակնհայտ է, որ մեր երկրում իրացման վերակողմնորոշման արդյունքում արձանագրվող գնաճը ավելի բարձր մակարդակ ունի, քան հարկային վարչարարության խստացման կամ հարկային օրենսդրության փոփոխությամբ արձանագրված գնաճն է, ինչը վիճակագրորեն անհերքելի փաստ է:

3. 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԲԵՆԶԻՆԻ, ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՍԵՂՄԱԾ ԳԱԶԻ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2017 թվականի դեկտեմբեր և 2018 թվականի հունվար ամիսներին արձանագրված բենզինի գնի թանկացմանը նախորդած 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում բենզինի միջին մանրածախ գների տատանումների 97.3 %-ը պայմանավորվել է փոխարժեքի ու նավթի համաշխարհային գների փոփոխություններով, 2015 թվականից սկսած՝ նաև ներմուծման աշխարհագրության փոփոխությամբ, իսկ 2016 թվականին՝ բենզինի շուկա նոր մատակարարի մուտք գործելու հանգամանքով: Ուշագրավ է, որ բենզինի մանրածախ վաճառքի բնագավառն այն քչերից է, որտեղ հաճախակի են բոլոր վաճառողների կողմից գների միաժամանակյա փոփոխությունները (ինչպես էժանացումը, այնպես էլ թանկացումը): Սակայն շուկայի մասնակիցների նմանատիպ վարքագիծը երբևիցե ՏՄՊՊՀ-ի կողմից չի դիտարկվել իբրև հավանական կարտելային համաձայնության դեպք և համանման վարույթ այս ապրանքային շուկայում չի իրականացվել:

Պետք է նշել, որ թեպետ ՀՀ-ում, և՛ մատակարարների, ՛և ՏՄՊՊՀ-ի կողմից բենզինի գների աճը հիմնականում մեկնաբանվել է հումքի համաշխարհային գների փոփոխություններով, սակայն վերջինս ներկայումս ավելի նվազ կերպով է ազդում ՀՀ-ում մանրածախ գնի ձևավորման վրա: Սա պայմանավորված է ՀՀ-ում ռուսական մեծածախ մատակարարների գործունեության հետ, որոնց մոտ բենզինի գնի ձևավորումը պայմանավորված չէ հումքի միջազգային շուկաներում նավթի գների փոփոխության հետ, քանզի դրանք այն ձեռք են բերում ոչ թե բորսայական գնով, այլ ինքնարժեքով, քանի որ շուկայի խոշոր մատակարարները բացի վերամշակող լինելուց նաև նավթի խոշոր արդյունահանողներ են:

2017 թվականի ընթացքում բենզինի ներմուծումներն իրականացրել են թվով երկու տնտեսվարող սուբյեկտներ, որոնք բենզինը ներմուծել են ՌԴ-ից և փոքր քանակությամբ նաև Բուլղարիայից: Մտահոգիչ հանգամանք է, որ ներմուծողները կենտրոնացած են սահմանափակ թվով մատակարարներից (ընդամենը 3) ապրանքների ձեռք բերման վրա: Միևնույն ժամանակ, սակայն, ՀՀ բենզին ներմուծողների ձեռքբերման գնի աճը համարժեք է եղել ՌԴ-ից արտահանվող բենզինի գների աճին: Մասնավորապես, 2017 թվականի դեկտեմբերին ձեռքբերման գինը և Ռուսաստանից արտահանված բենզինի միջինացված

գինը 2016-ի համեմատ աճել են շուրջ 23%-ով: Ընդ որում, նույն ժամանակահատվածում գրեթե նույն հավելաճը գրանցվել է նաև ՌԴ բենզինի մանրածախ շուկայում, ինչը տեղի փորձագետների կողմից հիմնականում մեկնաբանվել է արդյունահանողների՝ արտահանման կրճատումը ներքին շուկայում թանկացման հաշվին փոխհատուցելու մղումներով:

Ճիշտ է, թեև ՀՀ բենզին ներմուծողների ձեռքբերման գների և ՌԴ-ից բենզինի արտահանման միջին գների աճը եղել է համարժեք, սակայն մտահոգիչ է, որ ՀՀ բենզին ներմուծողների հայտարարագրած ձեռքբերման գինը շուրջ 0.11 դոլարով գերազանցել է Ռուսաստանից արտահանվող բենզինի միջին գինը[35]:

2018 թվականի հունվարի 1-ից բենզինի մանրածախ գների շուրջ 20 դրամով բարձրացումը կապված է արդեն ներմուծման համար ակցիզային հարկի բարձրացման հանգամանքով: 2018 թվականի հունվարի մեկից վերջինս 1 տոննայի հաշվով բարձրացել է 15000 ՀՀ դրամով: Եթե մինչև 01.01.18 թվականը 1 տոննա բենզինի ներմուծման համար ակցիզային հարկի գումարը կազմել է 25 000 դրամ, ապա ներկայումս այն կազմում է 40 000 դրամ: Բացի այդ, մինչ 2018 թվականը մաքսային սահմանին վճարվող ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) հանրագումարը կազմել է 120 000 ՀՀ դրամ, ապա այժմ՝ 135 000 ՀՀ դրամ: Դիզելային վառելիքի ակցիզային հարկը 2018 թվականի հունվարի 1-ից նվազել է 1 տոննայի համար 35 հազար դրամից 13 հազար դրամ: Միաժամանակ դիզելային վառելիքը սկսել է հարկվել ավելացված արժեքի հարկով: Սակայն ակնհայտ է, որ 2018 թվականի հունվարին բենզինի և դիզելային վառելիքի գների բարձրացումը գերազանցել է հարկային օրենսդրության փոփոխության արդյունքում ենթադրվող գնաճը[36]: Մասնավորապես, 2017թ. դեկտեմբերի 30-ին լիցքավորման կետերում 1լ բենզինը վաճառվել է 410 դրամով, իսկ դիզելային վառելիքը՝ 380 դրամով: Բենզինի վաճառքի գինը առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի 30.12.2017թ. կազմել է 322.8 դրամ, 2018թ. հունվարի 15-ին՝ 328.14 դրամ, տարբերությունը՝ 5.34 դրամ: Այսինքն ստացվում է, որ ակցիզային հարկի նոր դրույքաչափի կիրառումից հետո տնտեսվարող սուբյեկտը հունվարի 15-ին 1լ-ի հաշվով 5.3 դրամի չափով լրացուցիչ շահույթ է ստացել, հունվարի 22-ին՝ 13.68, փետրվարի 15-ին՝ 22 դրամի չափով, իսկ վաճառքի գնի (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) հավելաճի տեմպը կազմել է 6.8 %, ինչը զգալի է: Միանշանակ է, որ այս իրավիճակը պետք է

[35] Տարբերությունը ստացվել է ՀՀ ներմուծվող բենզինի միավորի մաքսային արժեքի և ՌԴ-ից արտահանվող բենզինի մաքսային արժեքի համադրման արդյունքում:

[36] Պնդման հիմնավորման նպատակով ներքոբերյալ հաշվարկներն իրականացվել են տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարկոսյանի կողմից:

գերիշխող դիրքի չարաշահման առումով մտահոգեր ՏՄՊՊՀ-ին: Մինչդեռ, դեռևս 2018թ. հունվարի 12-ի ՏՄՊՊՀ-ի գնահատականով՝ վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող[37]: Նույնիսկ այն բանից հետո, երբ տնտեսվարող սուբյեկտները երկու անգամ 10-ական դրամով միաժաման բարձրացրել են բենզինի գինը, կարգավորողը կրկին չարաշահումների բացահայտման նպատակով վարույթ չի սկսել:

Բենզինի և դիզելային վառելիքի գների, դրանց կազմերի փոփոխությունների հաշվարկը՝ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված

	30.12.2017	15.01.2018	22.01.2018	15.02.2018	15.02.2018-ը %-ով 30.12.2017թ.-ի նկատմամբ
1. ենզին*					
1) լ գինը, դրամ	410	430	440	450	109,76
2) Ակցիզային հարկը, դրամ (30.12.2017թ.՝ 1 տ-ի համար 25000, 2018թ. հունվարի 1-ից՝ 40000)	18.87	30.19	30.19	30.19	160
3) ԱԱՀ, դրամ	68.33	71.67	73.33	75.00	109.8
4) Բենզինի վաճառքի գինը՝առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի	322.8	328.14	336.48	344.81	106.8
5) Տարբերությունը 30.12.2017թ.-ի նկատմամբ, դրամ	-	5.34	13.68	22.01	-
2. իզելային վառելիք**					
1) լ գինը, դրամ	380	440	450	460	121.1
2) Ակցիզային հարկը, դրամ (30.12.2017թ.՝ 10%, բայց ոչ պակաս 1 տ-ի համար 35000, 2018թ. հունվարի 1-ից՝ 13000)	29.17	10.83	10.83	10.83	37.1
3) ԱԱՀ, դրամ	-	73.33	75	76.67	-
4) Դիզ վառելիքի վաճառքի գինը՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի / հաշվի առած ԱԱՀ-ի ազդեցությունը***[38]	350.83 / 321.6	355.84 / -	364.17 / -	372.5 / -	106.2 / 115.8
5) Տարբերությունը 30.12.2017թ.-ի համեմատությամբ, դրամ	- / -	5.01 / 34,24	13.14 / 42.57	21.67 / 50.9	- / -

Մի փոքր այլ է վիճակը դիզելային վառելիքի շուկայում: 2017 թվականին դիզելային վառելիքը ԱԱՀ-ով չի հարկվել, իսկ ակցիզային հարկը կազմել է բացթողման գնի 10%-ի չափով, բայց ոչ պակաս 1տ-ի հաշվով 35 հազար դրամ: 2018թ. հունվարի 1-ից դիզելային

[37] Տե՛ս ՀՀ Մրցակցային մարմնի պատասխանը ՀՅԴ-ին. Վառելիքի շուկայում չարաշահումների մասին խոսք անգամ լինել չի կարող http://competition.am/index.php?page=news_cases&newsID=1489&lng=1

[38] * Բենզինի խտության գործակիցը, միջինը՝ 1տ=1325 լ, ** Դիզ վառելիքի խտության գործակիցը, միջինը՝ 1տ=1200 լ, *** Եթե 2017 թ. դիզ վառելիքը ավելացված արժեքի հարկով հարկվեր և ընդունելով, որ վաճառքի գնի մեջ աշխատավարձը, հիմնական միջոցների մաշվածքը և շահույթը համատեղ կազմեն 50 %, ապա, առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի, վաճառքի գինը կկազմեր 321.6 դրամ:

վառելիքի ակցիզային հարկի դրույքաչափը 1տոննայի հաշվով կազմել է 13 հազար դրամ և այն սկսվել է ԱԱՀ-ով հարկվել: 1 լիտրի հաշվով դիզելային վառելիքի ակցիզային հարկը նախորդ տարվա դեկտեմբերին կազմել է 29.17 դրամ, վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի)՝ 350.83 դրամ, իսկ 2018թ. հունվարից, համապատասխանաբար՝ 10.83 դրամ (և 355.84-ից դարձել է 372.5 դրամ): Եթե, համադրելիություն ապահովելու համար, նույն պայմանների դեպքում նախորդ տարվա դեկտեմբերի համար ենթադրվի, որ դիզելային վառելիքը ԱԱՀ-ով ևս հարկվել է (հաշվի առնվի ԱԱՀ-ի ազդեցությունը), ապա դրա վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) կստացվի՝ 321.6 դրամ: Այս դեպքում, 2017թ. տարվա դեկտեմբերի հետ համեմատած՝ 2018թ. հունվարին դիզելային վառելիքի վաճառքի գինը (առանց ակցիզային հարկի և ԱԱՀ-ի) դիտարկվող օրերին համապատասխանաբար գերազանցել է՝ 32.24, 42.57 և 50.9 դրամով:

Ակնհայտ է, որ տնտեսվարող սուբյեկտները, ինչպես բնորոշ է օլիգոպոլ շուկաների մասնակիցներին, օգտվելով հարկային օրենսդրության փոփոխության հնարավորությունից, լրացուցիչ գերշահույթներ են ստացել:

ՀՀ ֆինանսների նախարարության գնահատումներով, ընդհանուր առմամբ, բենզինի գների բարձրացումը տնտեսությունում գնաճին կնպաստի 0.02%-ով, իսկ դիզելային վառելիքի հարկման ձևաչափի փոփոխությունը՝ 0.01%-ով: Սակայն այս համատեքստում կարևոր է գնահատել Հայաստանի տնտեսության համար էական նշանակություն ունեցող ոլորտների վրա այն տնտեսական ազդեցությունը, որը տեղի է ունեցել դիզելային վառելիքի նկատմամբ ԱԱՀ-ի կիրառման արդյունքում:

Դիզելային վառելիք սպառող հիմնական ոլորտներն են. բեռնափոխադրումների ոլորտը, կապիտալ շինարարությունը, հանքարդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Դիզելային վառելիքի հարկումը ավելացված արժեքի հարկով բեռնափոխադրողներին հնարավորություն կընձեռի հաշվանցել ավելացված արժեքի հարկի գումարը, որի արդյունքում վերջիններս դիզելային վառելիքը ձեռք են բերում ավելի ցածր արժեքով: Օրինակ՝ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը բեռնափոխադրողները դիզելային վառելիքը ձեռք էին բերում 1 լիտրը 380 դրամով, որն իր մեջ չէր պարունակում ԱԱՀ: Ներկայումս բեռնափոխադրողները դիզելային վառելիքը ձեռք են բերում 1 լիտրը 440 դրամով: Սակայն, փոխարենը հնարավորություն են ստանում իրենց ավելացված արժեքի հարկի պարտավորություններից նվազեցնել այդ գնի մեջ ներառված ԱԱՀ-ն, որը կազմում է 74 դրամ:

Այսինքն, ԱԱՀ-ի կիրառման արդյունքում դիզելային վառելիքի ձեռքբերման արժեքը այդ դեպքում կազմում է 366 դրամ, կամ 1 լիտրի հաշվով 14 դրամով ավելի պակաս, քան մինչև հունվարի 1-ն էր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ ներմուծվող, թե՛ արտահանվող և թե՛ ՀՀ տարածքում իրացվող ապրանքների գնագոյացման կառուցվածքում էական մաս է կազմում փոխադրման ծախսերը, դիզելային վառելիքի նկատմամբ ավելացված արժեքի հարկի կիրառումը, մեր կարծիքով, կարող է նույնիսկ առաջացնել գնանկում: Նույն իրավիճակն է նաև Հայաստանի տնտեսական աճի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը և կապիտալ շինարարությունը:
Ակցիզային հարկը նվազեցնելով և փոխարենը դիզելային վառելիքը ԱԱՀ-ով հարկելով պետությունը հարկային եկամուտների որևէ աճ չի նախատեսել:

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսության ոլորտին, ապա պետք է արձանագրել, որ գյուղացիական տնտեսությունները ավելացված արժեքի հաշվանցումներ չեն կարող իրականացնել, քանի որ գյուղատնտեսության ոլորտն ազատված է ավելացված արժեքի հարկից: Հետևաբար այստեղ անհրաժեշտություն կա կատարելու որոշակի քայլեր, որպեսզի մեղմվի գյուղացու վրա այս թանկացման ազդեցությունը:

2016 թվականի մայիսի 1-ից սեղմված գազը հանդիսանում է ենթաակցիզային ապրանքատեսակ. 1000 խմ.-ի համար սահմանված էր 8330 ՀՀ դրամ: 2018 թվականի հունվարի 1-ից այն կազմում է 25000 ՀՀ դրամ: Փաստացի 2018 թվականի հունվարի 1-ից մեկ խորանարդ մետրի հաշվարկով սեղմած գազի գների շուրջ 20 դրամով բարձրացումը կապված է բացառապես հարկային դրույքաչափի բարձրացման հետ: Ընդհանուր առմամբ սեղմած գազի ակցիզային հարկի բարձրացումը տնտեսությունում գնաճին կնպաստի 0.33%-ով:

IV. ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ԱՄՓՈՓՈՒՄ 1. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԳՆԱՃԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում գնաճի և գնանկման երևույթների մեկնաբանման առումով նշանակալի ազդեցություն ունեն.

- Զգայուն 22 ապրանքատեսակների (էներգակիրներ, հումք, պարեն) միջազգային գների տատանումները[39]:
- Ներքին շուկայում ապրանքների գների փոփոխության սեփական իներցիան, ինչը բացատրվում է գնաճի շղթայական բնույթով և սպառողների գնաճային սպասումներով (ադապտիվ սպասումներ):
- ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշի տատանումները:
- Վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունները:
- Հարկային և մաքսային դրույքաչափերի փոփոխությունները:

Առանձին ապրանքային շուկաներում ձևավորված մանրածախ գների փոփոխությունների վրա նշանակալի ազդեցություն ունեն.

- Կոնկրետ ապրանքատեսակի, կամ դրա արտադրության նպատակով անհրաժեշտ հումքի ձեռք բերման գների տատանումները:
- Ներմուծվող ապրանքների պարագայում՝ փոխարժեքի տատանումները:
- Ներմուծվող ապրանքների կամ ներմուծված հումքով արտադրությունների պարագայում՝ մատակարարումներում գնագոյացնող գործոնների և հիմնականում՝ ձեռք բերման գների ու բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները:
- Արտադրության, արտահանման և ներմուծման ծավալների և, իբրև հետևանք, ներքին շուկայում ապրանքային առաջարկի ծավալների փոփոխությունները (շուկայական կոնյունկտուրայում առաջարկի և պահանջարկի անհավասարակշռության խախտումը):

[39] Այս ապրանքների միջազգային գների տատանումները ՀՀ ներքին շուկայում ունենում են առաջնային, իսկ տնտեսության վրա ընդհանրապես երկրորդային երկարատև ազդեցություն:

- Մրցակցության սրության աստիճանի և ապրանքային շուկաներում համակենտրանացման աստիճանի ու գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների թվի փոփոխությունները:
- Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը զուգահեռ ստվերի կրճատման միտումները:

ԱՄՓՈՓՈՒՄ 2. 2017 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԵՎ 2018 Թ. ՀՈՒՆՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԳՆԱՃԻՆ ՆՊԱՍՏԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Առանձին ապրանքային շուկաներում ձևավորված մանրածախ գների փոփոխությունների վրա նշանակալի ազդեցություն են ունեցել.

- Ձեռք բերման գների փոփոխությունը և գնաճի ներցիան:
- Ապրանքային առաջարկի դեֆիցիտը:
- Հարկային դրույքաչափերի փոփոխությունը (2018 թվականի հունվարին՝ բենզինի, դիզելային վառելիքի և սեղմած գազի պարագայում):
- Հարկային քաղաքականության փոփոխությունից որոշ շուկաներում տնտեսավարողների՝ հավելյալ օգուտ ստանալու վարքագիծը:

ԱՄՓՈՓՈՒՄ 3. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԳՆԱՃԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում և առանձին ապրանքային շուկաներում գնաճին նպաստող գործոնների սահմանափակ թիվը, արտաքին և հիմնականում մակրո բնույթը, ինչպես նաև նշանակալի ազդեցությունը հիմնականում պայմանավորված են հետևյալ իրողություններով.

- ՀՀ մշակող արդյունաբերության ճյուղի արտադրողների զգալի մասի մոտ արտադրական սահմանափակ հզորությունների և ցածր արտադրողականության առկայությամբ:
- Գյուղացիական տնտեսությունների զգալի մասի մոտ թողարկման սահմանափակ հզորությունների և ցածր արտադրողականության առկայությամբ:
- Մանրածախ առևտրի բնագավառի կենտրոնացման բարձր աստիճանով:
- Առևտրային ցանցերից որոշների՝ բազմաթիվ ապրանքային շուկաներում մատակարար (արտադրող կամ ներկրող) լինելու հանգամանքով:
- Սոցիալական նշանակության ապրանքային շուկաների կենտրոնացման բարձր աստիճանով և դրանցում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների գործունեությամբ:
- Արտադրություն (նաև ներմուծում)-մանրածախ առևտուր շղթայում ձևավորված անառողջ տնտեսական հարաբերություններով[40]:

[40] Դրսևորվում է շրջանառության ոլորտում մատակարարների հավելյալ, հաճախ չհայտարարագրվող ծախսերի, դրանք իրականացնելու, ինչպես նաև առևտրային ցանցերում իբրև մուտքավճար թողնված ապրանքների փոխարեն նոր խմբաքանակ արտադրելու նպատակով հավելյալ վարկային միջոցներ ներգրավելու և իբրև հետևանք արտադրության փոփոխուն ծախսերի աճով:

V. «ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՃԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2018 թվականի հունվար ամիսներին արձանագրված գնաճը թեև ՀՀ ֆինանսների նախարարության գնահատումներով տնտեսության վրա ունի ոչ այնքան զգալի ազդեցություն, սակայն առանձին ապրանքային շուկաներում և տնային տնտեսությունների սպառողական ծախսերի վրա գնաճի ազդեցությունը զգալի է: Ընդ որում տնտեսության վրա 2017 թվականի վերջին և 2018-ի հունվարին արձանագրված գնաճի իրական ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել առնվազն 6 ամիս հետո (հաշվի առնելով ՀՀ տնտեսությունում գների աճի իներցիան և երկրորդային ազդեցության երկար ժամանակահատվածը): Ընդ որում տնտեսության վրա գնաճի և առանձին ապրանքային շուկաներում արձանագրված գնաճի երևույթների համակարգված վերլուծությունը փաստում է, որ առավել հրատապ խնդիր է ոչ այնքան 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2018 թվականի հունվար ամիսներին արձանագրված գնաճի պատճառների ուսումնասիրումը, որքան հենց ապրանքային շուկաներում ձևավորված գների «արդարացիությանն» ու օբյեկտիվությանն առնչվող խորքային վերլուծությունների իրականացումը և գների նվազեցմանը նպաստող հնարավոր ելքերի և առաջադրումը: Այս առումով հատկապես կարևոր նշանակություն է ստանում ներքին արտադրության աճի հնարավորությունների գնահատումը և գործարար մշակույթի ու հատկապես մանրածախ առևտրի բնագավառում ձևավորված բացասական իրողությունների վերափոխման հնարավորությունների գնահատումը, ինչպես նաև այս խնդրի կարգավորման գործուն մեխանիզմների առաջադրումը[41]:

Մասնավորապես, ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել որոշակի նպատակային քայլեր, որոնք մի կողմից կմեղմեն գնաճի ազդեցությունը՝

[41] Սույն դիրքորոշումը համընկնում է տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի կողմից արված առաջարկին: Մասնավորապես, ըստ Թ. Մանասերյանի պնդման «Գնաճի զսպման լավագույն միջոցներից է տեղական արտադրանքի խթանումը: Եթե չխթանվի տեղական արտադրությունը, Հայաստանը մշտապես կախված է լինելու արտերկրից: Գնաճը զսպելու համար կարևոր է թիրախավորել առաջին անհրաժեշտության 10 ապրանքախմբերը: Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ առաջին անհրաժեշտության տասն ապրանքախմբերից յոթի գծով, որոնք թիրախավորելու անհրաժեշտություն կա, մենք կարող ենք լինել գերազանցապես ինքնաբավ երկիր»:

հատկապես տնային տնտեսությունների պարենային ծախսերի և առավելապես բնակչության առավել խոցելի շերտերի վրա, և մյուս կողմից, կնպաստեն ներքին շուկայում մրցակցության իրապես սրմանը և արտադրության ծավալների ավելացմանը[42]:

Այդպիսի քայլերից կարող են լինել և դրական ազդեցություն ապահովել հետևյալները.

1. Ներքին շուկայում արտադրողների թվի ավելացմանը և նրանց տեխնոլոգիական հագեցվածության բարձրացմանը միտված հատուկ քաղաքականության մշակումը և իրականացումը: Այս առնչությամբ նպաստավոր կլիներ վերանայել հարկային արտոնությունների տրամադրման պրակտիկան ՀՀ-ում, արտոնությունները տրամադրել ըստ կատարողական արդյունավետության և հետապնդվող ռազմավարական առաջնահերթությունների: Իբրև ռազմավարական առաջնահերթություն կարելի է դիտարկել լրացուցիչ հարկային արտոնությունների, ինչպես նաև հարկային պարտքն իբրև վարկի ձևակերպման պրակտիկայի կիրառումն այն արտադրողների նկատմամբ, որոնք հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրության ճյուղերում կներդնեն մրցունակ ու արտադրողական տեխնոլոգիաներ:
2. Առևտրի ոլորտի կարգավորման օրենսդրության արմատապես վերանայումը և փոքր մատակարարների շահերի պաշտպանությանը միտված օրենսդրական նորմերի ներառումը, ինչը հետագայում ՏՄՊՊՀ-ին հնարավորություն կընձեռի ավելի արդյունավետ իրականացնել մրցակցության պաշտպանության իր գործառույթները:
3. Առևտրի բնագավառում միջնորդ ընկերությունների կողմից ցանցեր մուտք գործելու համար հավելյալ գումարների (մուտքավճար, որոշակի տարածքներում ապրանքի ցուցադրման դիմաց պահանջվող վճար, ցանց մուտք գործելու նախնական խմբաքանակի համար երկարաձգված վճարման (կրեդիտի) պայմանի առաջադրում) գանձման օրենսդրական արգելք կամ դուրսբերում ստվերից և միասնական

[42] Ըստ տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր Թ. Մանասերյանի դիրքորոշման «ՀՀ Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականությամբ ապահովում է յուրաքանչյուր տարվա համար նախատեսած սահմաններում գների կայունության որոշակի մակարդակը: Սակայն անհրաժեշտ է թիմային աշխատանք, որին պետք է մասնակցեն ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ Ֆինանսների, ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունները, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը և այլն: Միայն դրամավարկային քաղաքականությամբ հնարավոր չէ գնաճը զսպել: Կարևոր է զսպել հատկապես ներմուծվող ապրանքների գնաճը՝ հաշվի առնելով գերշահույթների ձևավորումը, ինչը պահանջում է հարկել գերշահույթ ստացողներին»:

չափորոշիչների սահմանում՝ ներառելով ՓՄՁ ոլորտի շահերի պաշտպանության նորմեր:

Մասնավորապես.

- Օրենսդրորդեն արգելել ցանցերի կողմից փոքր և միջին ձեռնարկություններից պահանջվող մուտքավճարները:
- Օրենսդրորդեն արգելել ցանցերի կողմից փոքր և միջին ձեռնարկությունների կողմից առաջարկվող արտադրանքից հրաժարվելը, առնվազն 6 ամիս ժամանակահատվածով:

4. Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների մոնիթորինգի և հատկապես նրանց կողմից չարաշահումների բացահայտման պարագայում կիրառվող տույժերի մեխանիզմների խստացում: Տվյալ դեպքում անհրաժեշտ է ներդնել և կիրառել գերիշխող դիրք ունեցող ընկերությունների գործունեության արդյունքում պետության և սպառողների կրած վնասի փոխհատուցման ինստիտուտը, ինչն արդյունավետ գործիք է չարաշահումների բացառման պրակտիկայում:
5. Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների և շուկայի մասնակիցների գործունեության հանրային վերահսկողության մեծացում: Մասնավորապես, ՏՄՊՊՀ դիտարկումների աշխատանքներում մարքեթինգային հետազոտությունների և սպառողների շահերի պաշտպանության կազմակերպությունների ներգրավում:
6. Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների արտադրական, ներմուծման, լոգիստիկ և շրջանառության ոլորտի ծախսերի թափանցիկացում և վիճակագրության հրապարակում (ինչն իրականացվում է բազմաթիվ երկրներում):
7. Տնային տնտեսությունների առաջին 4 անապահով դեցիլային խմբերի սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների և ծառայությունների համար առանձնացված ՍԳԻ ցուցանիշի վարում՝ դյուրինացնելու համար գնային տատանումների սոցիալական ազդեցության գնահատման աշխատանքները:
8. Կենտրոնացման բարձր աստիճան և մինչև 5 գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաներում միևնույն ժամանակային լագում շուկայի մասնակիցների կողմից գների միաժամանակյա փոփոխությունների դեպքերում ՏՄՊՊՀ միջամտության ինստիտուտի ներդրում՝ ներգրավելով նաև հանրային սեկտորի կազմակերպությունների:

9. Գյուղատնտեսության ոլորտում ակցիզային հարկի դրույքաչափի բարձրացման արդյունքում գյուղացիական տնտեսությունների համար դիզելային վառելքի թանկացման ազդեցությունը մեղմելու նպատակով առկա է անհրաժեշտություն կամ վերանայել հարկման նոր մոտեցումը կամ դիտարկել բարձրացման չափով գյուղացիական տնտեսություններին սուբսիդավորելու նպատակահարմարությունը:
10. Պարենային, առաջին անհրաժեշտության ոչ պարենային, հեղուկ վառելիքի, բենզինի և դիզելային վառելիքի շուկաներում միևնույն սուբյեկտի կողմից ապրանքների մատակարարման (արտադրության, ներմուծման, ներառյալ մեծածախ վաճառքը) և մանրածախ վաճառքի գործառույթների առանձնացում:
11. Հակամենաշնորհային և հակակոռուպցիոն ծրագրերի հստակեցում՝ ներկայացնելով դրանց կատարման ճանապարհային քարտեզը:
12. Դիտարկել արտահանվող կապիտալի հարկման նպատակահարմարությունը:
13. Մշակել միջնաժամկետ ծրագրեր, որոնք կերաշխավորեն առաջարկի համապատասխան հզորությունների ձևավորումը՝ պահանջարկի աճին արդյունավետ արձագանքելու և գնաճային ճնշումները մեղմելու նպատակով (օրինակ՝ գյուղատնտեսության մեջ արտադրողականության աճ, համայնքներում սառնարանային և ջերմոցային տնտեսություններիի ստեղծում և զարգացում):